

թիւններուն համար¹, որոնցմով սերտիս գրկած է նա ջղային և մտային հիւանդութիւններուն զօտարակնճիւ ճիւղը, և որուն մէջ՝ արդէն իսկ սկսած է նշանակելի գիրք մը և անուն մը ունենալ իբրև փարիզեան բժիշկ:

Տօքթ. Քօլօլեան իւր բժշկութեան առաջին քայլերէն իսկ սկսաւ իւր մանրախոյզ հետազոտութիւններուն և փորձառութիւններուն համարը սալ շարունակ բժշկական աշխարհին, հեղինակ ըլլալով ջլախաարանական կարգ մը լուրջ երկասիրութիւններու, որոնց ամէնէն ընտիրը, չըսեմ Գլուխ-Գործոցը, այն երկարաշունչ աշխատութիւնն է, որ կ'արժանանայ Académie de Médecineի բարձր գնահատման և մրցանակին:

Տօքթ. Քօլօլեանի վարձատրեալ այս աշխատութիւնը բաւական ընդարձակ զործ մըն է, գրեթէ սուտար հատոր մը, բաղկացեալ 500ի մօտ էջերէ, և կը կոչուի՝ «Traité de Thérapeutique de maladies Mentales et Nerveuses. Hygiène et Prophylaxie». այսինքն՝ Գարմանաբանութիւն մտային և չրային հիւանդութիւններու: Առողջապահութիւն և Դախազգոշութիւն:

Տպուած ընտիր թուղթի վրայ, գրուած շատ սահուն ֆրանսերէնով և կուս ու մեկին բացատրութիւններով, լոյս տեսած է անցեալ տարւոյն սկիզբները, Ժ. Պ. Պայերիս և ֆիզ Տպարանէն Փարիզու: Եւ տօքթ. Քօլօլեանի այս հրատարակութիւնը, ինչպէս գրեցին արդէն Փարիզեան բժշկական թերթերը, ամենամեծ պակաս մը կը լրացունէ բժշկութեան մէջ, որուն համար է որ Académie de Médecineը կը պսակէ զայն Տէրօթեան մրցանակով:

Մինչև ցարդ շատ ու շատ անգամներ գրուած է ջղային և մտային հիւանդութիւն-

ներու վրայ. շատ ու շատ անգամներ գեղեցիկ վարդապետութիւններով, ճարտար փորձերով նկարագրուած են անոնց ծագումը, բազմազան տեսակները, տարբերութիւնները, և այլն. Շառքօի, Պալի, Մանհանի, Լիւիսի, Վուալէնի, Կոասսէի գրիչները հատորներ ընցուցած են զանազան կերպ մտային ախտերու և ջղային հիւանդութիւններու մասին, բայց այդ հիւանդութիւններուն այլևայլ զարմանները ընդհանուր կերպով պատկերացնող գիրք մը տակաւին լոյս տեսած չէր, և աւստի այս պակասն է՝ զոր տօքթ. Քօլօլեան կը փորձէ լրացունել իր Ետընծայ հատորով, աշխատակից աննկող իրեն Փարիզեան ուրիշ ջլախտագէտ մը, մեծանունն տօքթ. Բօլ Կաննիէ բժիշկը:

Այս հատորը, ինչպէս կարդացողը կը տեսնայ, արդիւնք է գիտական բազմակերպ խուզարկութիւններու, երկար ու խզամիտ հետազոտութիւններու, զորոնք՝ տօքթ. Քօլօլեան Բօլ Կաննիէի փորձ-հմտութեամբն հակաիշունքէ վերջն է, որ համարձակած է ներկայացունել բժշկական աշխարհի. և ատոր լուրջ աշխատութիւն մը ըլլալուն աւելի ինչ մեծ վաւերականութիւն, քան մրցանակն Académie de Médecineին, որ այնչափ խիտ է, այնչափ ժշատ է մրցանակ տալու մասին, մանաւանդ օտարին:

Քօլօլեան-Կաննիէ հրատարակութիւնը բաժնուած է վեց մասերու: Առաջին մասն ակնարկ մըն է ջղային ու մտային հիւանդութիւններու զարմանի պատմութեան, որուն մէջ մանրամասն պարզուած կը գտնանք Հիպոկրատ բժիշկէն առաջ և յետոյ հիներու քով ջղային ու մտային հիւանդութիւններու ծանօթութեան ակար աստիճանն և

1. Տօքթ. Քօլօլեան Փարիզու մէջ 1898էն ի վեր, բայց վերջորեալ աշխատութիւնէն, հրատարակած է հետեւեալները
4^o. Les alcooliques persécutés 1898
8^o. Le traitement moral dans l'alitement 1900
7^o. L'alitement dans les maladie mentales et nerveuses 1900
5^o. Les Hallucinations psycho-motrices verbales dans l'alcoolisme 1899

4^o. La toxicité du sang dans l'Epilepsie 1899
3^o. Les troubles trophiques de la paralysie générale 1898
6^o. Hyperesthésie corticale dans l'alcoolisme aiguë 1900
2^o. Etude séméiologique de l'agitation 1898
9^o. L'action physiologique des différents sels de soude sur les poissons d'Eau douce 1901
10^o. La toxicité des alcools chez les poissons 1901